13 փետրվարի 2020 թվականի N 148 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 14-Ի N 217-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ Մ Ա Ս Ի Ն

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը

ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի մարտի 14-ի «Ներդրումային ծրագրի շրջանակներում «ԷՅ ԸՆԴ ԷՄ ՌԵՅՐ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից ապրանքների ներմուծման դեպքում մաքսային և հարկային մարմինների կողմից հաշվարկված ավելացված արժեքի հարկի գումարների վճարման ժամկետը երեք տարի ժամկետով հետաձգելու մասին» N 217-Ա որոշման հավելվածի ցանկում կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունը՝

1) հավելվածը 80-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 81-83-րդ կետերով.

«

81.	7308	Մետաղական կոնստրուկցիա քանդված վիճակում (դարակաշար պահեստի համար)	կգ	7 196	7 329 928
82.	7311	Տարողություն հեղուկ գազի համար, PV500 Liquid Nitrogen Vessel PD5500 կոռոզիակայուն պողպատից 500լ տարողությամբ, 2 հատ	կգ	840	9 761 677
83.	9405	LED լուսատու Luminare 7651Fi, լուսատուի մասեր (Trunking, End Cap, Clamp)	կգ	1 163	20 232 630

».

2) հավելվածի «ԸՆԴԱՄԵՆԸ» պարբերության մեջ «446 146 928» թիվը փոխարինել «483 471 163» թվով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԱՎԻՆՅԱՆ

2020 թ. փետրվարի 14
Երևան